

րէ Կեղորոնի հովտին մէջ գտնուած ա՛յն արմաւենին, որմէ տը-
ղաքները ճիւղեր քաղած էին Յիսուսի յաղթանակաւ Երուսաղէմ
մտած ժամանակ. յետոյ Երուսաղէմացին կը յիշէ Գէթսեմանին՝
ուր ցոյց կու տայ Յուդան ամէն անոնց որ կրնան հասկնալ. նոյն
հեղինակը դարձեալ իր գրքէն նոր վկայութիւն մը կը բերէ
«Գեթսեմանին՝ ուր կատարուած է մատնութիւնը»: Այս վերջնոյն
վրայ կ'աւելցնէ Աղօթքի տեղւոյն յիշատակութիւնը հետեւեալ
կերպով. «առանց խօսելու Զիթենեաց լերան մասին ուր ներկայ
աշակերտները գիշերը կ'աղօթէին, կը յիշե՞ս Գեթսեմանիի մէջ
Յիսուսի դէմ ուղղուած սուրբերը»: Այս բացատրութեանց ա-
նորոշութիւնը և ճշգրտեան փոքր թերութիւն մը Երուսաղէ-
մացիին յանկարծական պերճախօսութեան կը վերագրուի, եւ
չ'արգիլեր այս վերջին հաստուածին Գեթսեմանիի մէջ պատմուած
յիշատակներու երկուութիւնը:

Եթէ Եւսեբիոս իր Եսայիի Անկնութեան մէջ կը յիշէ մատնու-
թիւնը Գեթսեմանիի վրայ խօսած ժամանակ, իր 330 ին խմբա-
գրած Onomasticonին մէջ, անոր կը յարէ Քրիստոսի աղօթքին
յիշատակը: Իր ծանօթագրութիւնը շատ հետաքրքրական է,
վասն զի ան կը հաստատէ տւանդութիւն մը որ իրմէ շատ յառաջ
գոյութիւն ունէր. «Գեթսեմանին, կը գրէ, այնպիսի տեղ մ'էր,
ուր Քրիստոս իր չորչարանքէն առաջ աղօթեց, ան դէպի Զի-
թենեաց լեռը ելնելիք ճամբուն վրայ կը գտնուի: Հոս այժմ հա-
ւատացեալք կուգան աղօթելու»: Կիւրեղի և Եւսեբիոսի բացա-
տրութիւններէն կ'երևի որ տակաւին եկեղեցի չ'ինուած չէր Քը-
րիստոսի աղօթած տեղւոյն վրայ:

Բայց երբ Յերոնիմոս Թարգմանեց (386-391) Եւսեբիոսի տե-
ղագրական ճառը, կը փոխուի խնդիրը: Իր ճշգրիտ և տմբողջա-
կան ծանօթագրութիւնը իր նախորդինն է «Գեթսեմանին, կ'ըսէ,
այն տեղն է որ Փրկիչը իր չորչարանքէն առաջ աղօթեց, Զի-
թենեաց լերան ստորոտը կը գտնուի, այժմ հոն եկեղեցի մը կայ
շինուած»: Լեռանը usurus բառերը կ'արգիլեն մեզ լերան գագաթ
վայրին վրայ փնտռելու նոյն սրբավայրը: Գալով այժմ բռնին,
շատ յատկանշական է ան: Թարգմանիչը Եւսեբիոսի բնագիրին
դիմացը դանուկելով՝ կը տեսնէ որ կացութիւնը միևնոյնը չէ, հա-
ւատացեալք այլևս չեն աղօթեր բացօթեայ դաշտի մը մէջ. բայց
այն պահուն որ կը գրէր, քրիստոնէից կողմէն պատմուած այս